

Հաստատում եմ՝
ԼՂՀ պաշտպանության նախարար
գեներալ-լեյտենանտ
Մ. Հակոբյան
« 05 » 02 2015թ.

Հաստատում եմ՝
ԼՂՀ կրթության և գիտության
նախարար Ս. Ասրյան
« 02 » 02 2015թ.

Համաձայնեցված է՝
ԼՂՀ ԿԱ արտակարգ իրավիճակների պետական ծառայության
տնօրեն՝ Ա. Հարությունյան
« 04 » 02 2015թ.

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

*ԼՂՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների
նախագորակոչային տարիքի պատանիների միջև ռազմականացված
հնգամարտի հանրապետական մրցումների*

1. Նպատակը և խնդիրները

- Դպրոցականների մեջ սեր դաստիարակել դեպի ռազմական գործը:
- Դպրոցականներին նախապատրաստել հայրենիքի պաշտպանությանը:
- Նպաստել հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ՆՁՊ և ֆիզիկական կուլտուրա առարկաների ծրագրերի յուրացմանը:
- Ապահովել հանրակրթական ուսումնական հաստատություններում ռազմակիրառական մարզաձևերի հետագա զարգացումն ու մասսայականացումը:
- Դպրոցականների մեջ դաստիարակել հայրենասիրություն և ապագա զինվորի համար համապատասխան որակներ՝ վազքի, նռնակի նետման, անհատական պաշտպանության միջոցների ճիշտ օգտագործման, առաջին բուժօգնության ցուցաբերման և տարածության մեջ արագ և ճիշտ կողմնորոշման ընդունակություններ և հմտություններ:

2. Մրցումների ղեկավարումը

Մրցումների ընդհանուր ղեկավարությունն իրականացնում են ԼՂՀ կրթության և գիտության, ԼՂՀ պաշտպանության նախարարությունները ԼՂՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայության հետ համատեղ, իսկ անմիջական անցկացումը կազմակերպում է ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված մրցավարական հանձնախումբը:

3. Մրցումների անցկացումը և ժամկետները

Ուղղման անցված հնգամսյա մրցումները անց են կացվում 2 փուլով:
1-ին փուլ՝ շրջանային /քաղաքային/ մինչև 2015 թ. մարտի 14-ը,
2-րդ փուլ՝ հանրապետական՝ մարտի 24-26-ը:

4. Մասնակիցները

Մրցումներին թույլատրվում է մասնակցել ԼՂՀ շրջանների և Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 8-9-րդ դասարանների նախագորակոչային տարիքի պատանիներից կազմված հավաքական թիմերին:

Թիմի կազմը՝ 5 մասնակից և 1 մարզիչ-ներկայացուցիչ: Ընդամենը՝ 6 հոգի:
Հագուստը՝ մարզական /ունենալով համապատասխան տարբերանշաններ, կրծքահամարներ կամ անվանումներ/:

5. Ծրագիրը

Մրցումները անց են կացվում հետևյալ մարզածևերից և ռազմակիրառական վարժություններից.

1. վազք՝ 1000 մետր,
2. վազք՝ 100 մետր,
3. վերելք ուժով,
4. նռնակի նետում հեռավորության վրա,
5. ռազմակիրառական համակցված փոխանցումավազք :

Ուղղմակիրառական համակցված փոխանցումավազքի անցկացման կարգը

Երթուղին բաժանվում է 5 փուլերի:

1. Տրվում է մեկնարկ, թիմը/ջուկը/ շարժվում է դեպի ազիմուտի որոշման կետը:
2. Թիմը ստանում է ծրար, որում նշված են կողմնորոշիչը, ազիմուտը և զույգ քայլերի քանակը:
3. Հասնելով կողմնորոշիչին՝ թիմը «պայմանական ձորի» վրայով շարժվում է դեպի անցման կետը՝ տեղադրելով գերանը և անցնելով նրա վրայով: Անցնելով մյուս կողմը՝ թիմը ստանում է «Գազեր» հրամանը և շարժվում երթուղով դեպի «Եղևնի» կողմնորոշիչը:
4. Հասնելով «Եղևնի» կողմնորոշիչին, թիմը ստանում է « քիմիական տագնապի ավարտ» հրամանը, հանում է հակազագերը, տեղավորում պայուսակի մեջ և շարժվում դեպի «Առաջին բուժօգնության ցուցաբերման կետը»:
5. Ցուցաբերելով առաջին բուժօգնությունը՝ վիրակապի դնում նախաբազկին կամ սրունքին, տուժածին պատգարակի վրա տեղավորում, շարժվում է դեպի վերջնագիծը:

Տուգանային միավորները

- Գերանի տեղադրումը ոչ նշված տեղում-կրկնակի տեղադրում:
- Մասնակցի ընկնումը գերանից – մասնակցի հետ վերադարձը և անցումը նորից:
- Ցուցադրված գծից անցումը/ «Անդունդի» սահմանը/- 3ր
- Շարժման ուղղության ոչ ճիշտ որոշումը – 3 ր
- 3-րդ փուլի անցումը առանց հակազագի -3ր
- Վիրակապի ոչ ճիշտ դնումը – 1 ր
- Տուժածին պատգարակի վրա ոչ համաձայնեցված տեղավորումը – 1 ր
- Պատգարակի անհամաձայնեցված բարձրացնելը, տեղափոխելը և գետին իջեցնելը– 1ր:
- Տուժածի՝ պատգարակից ընկնելը- թիմը հանվում է երթուղուց:
- Մրցավարի օգնությունը – 3ր
- Թիմը չի տեղափոխվել ստուգարքային ժամանակում/20ր/ – հանվում է երթուղուց:

Ծանոթություն. *Ուղղակի րառական համակցված փոխանցումավազքի երթուղու պայմանական սխեման կցվում է /հավելված 1/:*

6.Մրցումների անցկացման կարգն ու պայմանները

1-ին փուլի՝ ռազմականացված հնգամարտի մրցումները անց են կացվում Ստեփանակերտի քաղաքապետարանի և ԼՂՀ շրջվարչակազմերի աշխատակազմերի կրթության բաժինների կողմից հաստատված մրցավարական հանձնախմբերի պատասխանատվությամբ:

2-րդ՝ հանրապետական փուլի մրցումները կանցկացվեն Ստեփանակերտ քաղաքի հանրապետական մարզադաշտում:

7.Մրցումներում հաղթողների որոշման կարգը

Անհատական առաջնությունում գրաված տեղերը որոշվում են մասնակցի՝ բոլոր 5 մարզաձևերից ցույց տված հանրագումարային լավագույն արդյունքով:

Հավասար արդյունքների դեպքում առավելությունը տրվում է այն մասնակցին, որն ունի լավագույն արդյունք՝ ներքոբերյալ կարգով:

1. նռնակի նետում,
2. վերելք ուժով,
3. վազք 1000 մետր,
4. վազք 100 մետր,
5. ռազմակիրառական համակցված փոխանցումավազք:

Վերջնական արդյունքը որոշվում է մասնակիցների ընդհանուր միավորների քանակով:

Թիմային հաշվարկի մեջ մտնում է բոլոր մասնակիցների արդյունքների հանրագումարը:

Թիմերի միջև հավասար արդյունքների դեպքում առավելությունը տրվում է նույն կարգով, ինչպես որոշվել է անհատական առաջնության դեպքում:

Միավորների հաշվարկի աղյուսակները կցվում են՝ հավելված հ. 2:

8.Մրցումների ծախսերը

Մրցումների կազմակերպման և անցկացման հետ կապված ճանապարհածախսի, սննդի, գիշերավարձի, մրցավարների և սպասարկող անձնակազմի վճարումների, մրցանակների ձեռքբերումը հոգում է ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունը: Նյութական և գործնական ապահովումը կազմակերպում են ԼՂՀ պաշտպանության նախարարությունը և ԼՂՀ ԿԱ փրկարար ծառայությունը:

9. Պարզևատրությունները

Ընդհանուր թիմային հաշվարկում մրցանակային 1-3-րդ տեղեր գրաված թիմերը պարզևատրվում են ԼՂՀ ԿԳ նախարարության, ԼՂՀ պաշտպանության նախարարության և ԼՂՀ փրկարար ծառայության համապատասխան կարգի դիպլոմներով, պատվոգրերով, դրամական պարգևներով և արժեքավոր նվերներով:

Անհատական մրցումներում 1-3-րդ տեղեր գրաված մարզիկները պարզևատրվում են ԼՂՀ ԿԳՆ և ԼՂՀ ՊՆ պատվոգրերով և դրամական պարգևներով:

Խրախուսվում են նաև մրցանակային տեղեր գրաված թիմերի մարզիչները:

10. Հայտերը

Մրցումների մասնակից թիմերի անվանական հայտերը ներկայացվում են մրցումների ժամանման օրը՝ մարտի 24-ին:

Սույն կանոնակարգը պաշտոնական հրավեր է ռազմականացված հնգամարտի հանրապետական մրցումներին մասնակցելու համար:

Ծանոթություն:


Յուրաքանչյուր թիմ, ներկայանալով մրցումներին իր հետ պետք է ունենա՝

- հակազազ ԳՊ-5՝ - 5 հատ՝ հարմարեցված մասնակիցների չափերին,
- սպորտային նռնակ / 500գր./- 2 հատ,
- մասնակիցը մրցումներին պետք է մասնակցի մարզահագուստով:

ԼՂՀ ՊՆ ռազմահայրենասիրական
դաստիարակության և հասարակական
կազմակերպությունների հետ կապերի
բաժնի պետ

գնդապետ՝  Բ. Մուրադյան

ԼՂՀ ԿԳՆ ռազմահայրենասիրական,
ֆիզիկական դաստիարակության և
հասարակական կազմակերպությունների
հետ կապերի բաժնի

վարիչ՝  Վ. Գրիգորյան